Արձանագրություն N 6
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 6 սեպտեմբերի 2018թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալայանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Է. Մխիթարյանը և Հ. Սիրունյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու վերաբերյալ:

2. Ուսումնասիրության արդյունքները

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ–ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված թերությունները, այն է՝ ներկայացրել է հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների՝ մասնավորապես Հարություն Երեմյանի (ինժեներ, երկրաբան- հիդրոերկրաբան) կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՋԱՆԻԿԻ Ա/Ձ-ն ներկայացրել է հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով ընթացակարգի

1. 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «ՎԱԼՄԼ» ՍՊԸ–ին հայտարարել ընտրված մասնակից:

2. 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՋԱՆԻԿԻ» Ա/Ձ-ի հայտը մերժել՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետի և ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով հրավերի 7.15 կետի (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ):

3. 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ–ին և առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելվածներ 5, 5.1 և 5.2):

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____Ա. Բալայան

Անդամներ _____Է. Մխիթարյան

_____Ա. Սիմոնյան

_____Հ. Սիրունյան

Քարտուղար _____Ա. Սարգսյան